

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ,
ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ»
(Թիւ 3)

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ
ՄԱՍԻՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2026

ՀՐԱՄԱՆԱԻ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԱՍԻՆ

1) Ի՞նչ կը հասկնանք «Աստուածաշունչ» ըսելով:

- Կը հասկնանք՝ Աստուծոյ շունչով, այսինքն՝ Սուրբ Հոգիով գրուած Սուրբ Գիրքերը:

2) Ուրկէ՞ առնուած է Աստուածաշունչ բացատրութիւնը:

- Առնուած է Աստուածաշունչէն.
«Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ Գիրքերը օգտակար են» (Բ.Տմ 3.16): «Աստուածաշունչ»

բառը յատուկ է միայն մեր ազգին:
Բոլոր միս լեզուներուն մէջ «Սուրբ
Գիրք» բառերը կը գործածուին:

3) Քանի՞ մասերէ կը բաղկանայ
Աստուածաշունչը, եւ ի՞նչ կը կոչ-
ուին անոնք:

- Կը բաղկանայ երկու մասերէ:
Կը կոչուին՝ «Հին Կտակարան» եւ
«Նոր Կտակարան»:

4) Ինչո՞ւ համար Աստուածա-
շունչի գիրքերը կոչուած են «Կտա-
կարան»:

- Որովհետեւ անոնք Աստուծոյ
կողմէ մեզի թողուեցան իբրեւ հա-
րուստ կտակ:

5) Ի՞նչ կը նշանակէ «կտակ»:
- Կրօնական առումով կը նշանակէ՝ Աստուծոյ ուխտը մարդկութեան հետ:

6) Հին եւ Նոր Կտակարանները, ուրիշ ի՞նչ անուններով կը կոչուին:
- Հին Ուխտ եւ Նոր Ուխտ:

7) Ինչո՞ւ համար Հին Կտակարանը կը կոչուի նաեւ՝ Հին Ուխտ:
- Որովհետեւ անոր մէջ Աստուած փրկութեան ուխտ կը կնքէ Նոյի, Աբրահամի, Մովսէսի, եւ Դաւիթի հետ կենդանական զոհերու եւ այլ միջոցներով, որոնք հիմնուած են Օրէնքին վրայ:

8) Ինչո՞ւ համար Նոր Կտակարանը կը կոչուի նաեւ՝ Նոր Ուխտ:

- Որովհետեւ անոր մէջ Քրիստոս իր արիւնով փրկութեան նոր ուխտ մը կնքեց, որ կը վերաբերի ամբողջ մարդկութեան, եւ որ հիմնուած չէ Օրէնքին վրայ, այլ՝ Շնորհքին (Ղկ 22.20: Մր 14.23-24: Մտ 26.27-28):

9) Ո՞ր թուականին առաջին անգամ մեր հայրերը թարգմանեցին Աստուածաշունչը:

- 404-405 թուականներուն, Հայոց Այբուբենի գիտէն անմիջապէս ետք, կը վկայէ Կորիւն Վարդապէտ:

10) Առաջին այս թարգմանությունը կատարելու համար, մեր հայրերը ո՞ր բնագիրը ունեցան իբրև հիմք:

- Ասորերեն բնագիրը, որոշ չափով մըն ալ՝ Յունարեն բնագիրը:

11) Որո՞նք կատարեցին Աստուածաշունչի առաջին այս թարգմանությունը:

- Սահակ Պարթեւ Կաթողիկոս, Մեսրոպ Մաշտոց, Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, եւ ուրիշներ:

12) Աստուածաշունչի այս առաջին թարգմանությունը ի՞նչ անու-

նով բնութագրուած է մեր պատմագրութեան մէջ:

- «Փութանակի Թարգմանութիւն» (Կորիւն Վարդապետ եւ Մովսէս Խորենացի):

13) Ինչո՞ւ մեր պատմագիրները Աստուածաշունչի առաջին այս թարգմանութիւնը կոչած են «Փութանակի Թարգմանութիւն»:

- Որովհետեւ փութով, այսինքն՝ արագօրէն ըրին զայն, քանի իրենց ձեռքին տակ չունէին պէտք եղած բնագիրները:

14) Ո՞ր թուականին մեր հայրերը վերատեսութեան ենթարկեցին

փութանակի կերպով իրենց կատարած թարգմանությունը:

- Վերատեսութեան այս աշխատանքը սկսաւ 432-ին եւ իր աւարտին հասաւ 435-ին:

15) Որո՞նք կատարեցին վերատեսութեան այս աշխատանքը :

- Սահակ Կաթողիկոս, Եզնիկ Կողբացի, եւ ուրիշներ:

16) Վերատեսութեան գործին համար, մեր հայրերը ո՞ր բնագիրը ունեցան իբրեւ հիմք:

- Եօթանասնից բնագիրը: Խօսքը Հին Կտակարանի թարգմանութեան մասին է միայն:

17) Ի՞նչ կոչուած է վերատեսութեան ենթարկուած Գրաբար մեր Աստուածաշունչի այս թարգմանութիւնը:

- Թարգմանութեանց Թագուհի:

18) Ո՞վ գայն կոչած է «Թարգմանութեանց Թագուհի»:

- Ֆրանսացի հայագէտ՝ Լա Քրոզ (Մաթիւրէն Վէյսիէր), 17-րդ դար:

19) Ե՞րբ եւ ո՞ր տեղի ունեցաւ Հայերէն Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը:

- 1666-ին, Հոլանտայի Ամսթերտամ քաղաքին մէջ:

20) Որո՞ւ աշխատանքով տեղի ունեցավ ատիկա:

- Երեւանցի Ոսկան Վարդապետի աշխատանքով:

21) Ե՞րբ տեղի ունեցավ Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը գլուխներով եւ համարներով:

- 1551 թուականին:

22) Ո՞վ եւ ո՞ր թուականին կատարեց Հին եւ Նոր Կտակարաններուն գլուխներուն բաժանումը:

- Անգլիացի Եպիսկոպոս Ստեփան Լանկտոն (Stephan Langton), 1226 թուականին:

23) Ուրիշ ո՞վ կատարած է Նոր Կտակարանի գլուխներուն բաժանումը:

- Հռոմայեցի կարտինալ՝ Հուկո Տէ Սանքթո Քարո, 1240 թուականին:

24) Ո՞վ կատարեց Հին Կտակարանի համարներուն բաժանումը:

- Մուրթթէ Նաթան Եբրայեցի, 15-րդ դարուն:

25) Ո՞վ կատարեց Նոր Կտակարանի համարներուն բաժանումը:

- Ռոպէր Էսթիէն (Robert Estienne) անունով ֆրանսացի տպագրիչ մը, 1551 թուականին:

26) Ի՞նչ լեզուով գրուեցաւ Հին
Կտակարանը:

- Եբրայերէնով:

27) Ի՞նչ լեզուով գրուեցաւ Նոր
Կտակարանը:

- Յունարէնով:

28) Ի՞նչ լեզուով Յիսուս կատա-
րեց իր քարոզութիւնները:

- Արամերէնով:

29) Ինչո՞ւ աշակերտները Նոր
Կտակարանը գրի առին Յունարե-
նով, երբ Տէրը քարոզեց Արամե-
րէնով:

- Որովհետեւ Յիսուսի ժամա-

նակ Յունարէնը միջազգային լեզու էր: Փրկութեան Աւետարանը տարածելու համար անհրաժեշտ էր որ աշակերտները Յունարէնով գրի առնէին Նոր Կտակարանը:

30) Քանի՞ գիրքերէ կը բաղկանայ Աստուածաշունչը:

- 66: Հին Կտակարանը՝ 39 գիրք, իսկ Նոր Կտակարանը՝ 27 գիրք:

31) Նոր Կտակարանի 27 գիրքերը քանի՞ խմբաւորումի կը բաժնուին:

- 5 խմբաւորումի.-

1) 4 Աւետարանները՝ Մատթէոս, Մարկոս, Դուկաս, Յովհաննէս:

2) Գործք Առաքելոց գիրքը:

3) 14 նամակներ: Հռոմայեցիներուն նամակէն մինչեւ Եբրայեցիներուն նամակը:

4) Ընդհանրական 7 նամակները:

5) Յայտնութեան գիրքը:

32) Ո՞ր նամակները կը կոչուին «Ընդհանրական նամակներ»:

- Յակոբոսի, Պետրոսի Ա. եւ Բ, Յովհաննէսի Ա. Բ. եւ Գ., եւ Յուդայի նամակները:

33) Ինչո՞ւ համար կը կոչուին «Ընդհանրական նամակներ»:

- Որովհետեւ անոնք մասնաւոր ազգի մը ուղղուած չեն, այլ ընդհանուր մարդկութեան ուղղուած են:

34) Աստուածաշունչի ո՞ր գիրքերուն համար կը գործածենք «Հնգամատեան» անուանումը:

- Առաջին հինգ գիրքերուն համար.- Ծննդոց, Ելից, Ղեւտացոց, Թուոց եւ Բ. Օրինաց:

35) Աստուածաշունչի գիրքերէն որո՞նք «պատմական գիրքեր» են:

- Հնգամատեանին յաջորդող 12 գիրքերը՝ Յեսուէն մինչեւ Եսթեր:

36) Որո՞նք «բանաստեղծական գիրքեր» են:

- Յոբայ, Սողոմոնաց, Առակաց, Ժողովողի եւ Երգ Երգոց գիրքերը:

37) Որո՞նք «մարգարեական գիրքեր» են:

- Հին Կտակարանի վերջին 17 գիրքերը, Եսայիի գիրքն մինչև Մադաքիայի գիրքը:

38) Որո՞նք կոչուած են «մեծ մարգարէներ»:

- Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ:

39) Որո՞նք կոչուած են «փոքր մարգարէներ»:

- Հին Կտակարանի վերջին 12 գիրքերը, Ովսեայէն մինչև Մադաքիա:

40) Ո՞ր գիրքը կոչուած է «Մեսիական Գիրք»:

- Եսայի մարգարէին գիրքը:

41) «Օրենք» կամ «Օրենքի գիրք»
ըսելով Աստուածաշունչին ո՞ր
գիրքերը կը հասկնանք:

- Ծննդոց, Ելից, Ղեւտացոց,
Թուոց եւ Բ. Օրինաց գիրքերը:

42) Հին Կտակարանի գիրքե-
րուն հեղինակներէն ո՞վ հրեայ չէր:

- Յոբը:

43) Հին Կտակարանի պատմու-
թիւնը քանի՞ օղակի կը բաժնուի:

- Վեց:

ա) Համամարդկային պատմու-
թիւն: Ադամէն մինչեւ Բաբելոնի աշ-
տարակաշիւթեան ժամանակ:

բ) Նահապետական ժամանակ:

- զ) Եզիպտոսէն ելքի եւ անապատային թափառումներու ժամանակ:
- ը) Դատաւորներու ժամանակ:
- է) Թագաւորներու ժամանակ:
- զ) Բաբելոնի Գերութեան եւ վերադարձի ժամանակ:

44) Աստուածաշունչի ո՞ր բաժինը կը ներկայացնէ համամարդկային պատմութեան ժամանակաշրջանը:

- Ծննդոց 1-11 գլուխները:

45) Ո՞ր բաժինը կը ներկայացնէ նահապետներու պատմութիւնը:

- Ծննդոց 12-50 գլուխները:

46) Աստուածաշունչի ո՞ր գիրքերը կը ներկայացնեն Եզրայտոսէն ելքի եւ անապատային թափառումներու պատմութիւնը:

- Ելից եւ Թուոց գիրքերը:

47) Ո՞ր գիրքերը կը ներկայացնեն դատաւորներու պատմութիւնը:

- Յեսուի եւ Դատաւորաց գիրքերը, ինչպէս նաեւ Ա. Թագաւորաց գիրքին 1-8 գլուխները:

48) Ո՞ր գիրքերը կը ներկայացնեն թագաւորներու պատմութիւնը:

- Թագաւորաց չորս գիրքերը, ինչպէս նաեւ Ա. եւ Բ. Մնացորդաց գիրքերը:

49) Ո՞ր գիրքերը կը խօսին Բաբելոնի գերութեան եւ գերութենէ դէպի հայրենիք (Երուսաղէմ) վերադարձին մասին:

- Դանիէլի, Եսթերի, Եզրասի եւ Նեհեմիայի գիրքերը:

50) Իսկ ո՞ր կրնանք կարդալ նախաքրիստոնէական չորս դարերու պատմութեան մասին:

- Մակաբայեցիներու գիրքերուն մէջ, ինչպէս նաեւ այլ Երկրորդականոն կոչուած գիրքերուն մէջ:

51) Հայ առաքելական Եկեղեցին կ'ընդունի՞ Երկրորդականոն կոչուած գիրքերը:

- Այո՛, բայց զանոնք կ'ընդունի իբրև օգտակար եւ ուսուցողական գիրքեր, ո՛չ իբրև կանոնական եւ Աստուածաշունչ գիրքեր:

52) Ի՞նչպէս պատահեցաւ որ մեր հայրերը թարգմանեցին Երկրորդականոն կոչուած գիրքերը:

- Վերեւ տեսանք թէ մեր հայրերը՝ Սահակ Կաթողիկոս, Եզնիկ Կողբացի եւ ուրիշներ, հայոց լեզուի գիրերու գիւտէն անմիջապէս ետք կատարուած փութանակի թարգմանութիւնը երբ վերատեսութեան ենթարկեցին 432-435ի միջեւ՝ իբրև հիմք ունեցան Եօթանասնից բնագիրը. եւ քանի Եօթա-

նասնից բնագիրին մեջ կային Երկրորդականոն գիրքերը զանոնք եւս թարգմանեցին, եւ մենք անոնցմէ այսօր բաժիններ կը գտնենք մեր Ճաշոց գիրքին մեջ. բայց կը կրկնեմ, անոնք Ճաշոցին մեջ ներկայ են իբրեւ օգտակար եւ ուսուցողական գիրքեր, ո՛չ իբրեւ կանոնական եւ Աստուածաշունչ գիրքեր: Հայ Առաքելական եկեղեցին Երրայական Կանոնն է որ կ'ընդունի, որ կ'ընդգրկէ մեզի ծանօթ 39 գիրքերը միայն:

53) Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն առաջին ժողովածոն:

- Առաջին ժողովածուն կատարեց Մովսէս մարգարէն, երբ գրի առաւ Ծննդոց, Ելից, Ղեւտացոց, Թուոց եւ Բ. Օրինաց գիրքերը, ք.Ա. 1446-էն 1406-ի միջեւ: Գործը կատարեց քահանաներուն օգնութեամբ:

54) Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն երկրորդ ժողովածուն:

- Յուդայի Եզեկիա թագաւորը ք.Ա. 716-էն 687-ի միջեւ, (Բ.Մ՛ն 31.21: Հմմտ Առ 25.1):

55) Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն երրորդ ժողովածուն:

- Երրորդ ժողովածոն կազմուեցաւ Յովսիա թագաւորին օրով, Ք.Ա. 640-ական թուականներուն:

56) Ո՞վ եւ ե՞րբ կատարեց Հին Կտակարանի գիրքերուն չորրորդ ժողովածոն:

- Քահանայական դասը, Բաբելոնի գերութեան օրերուն, Ք.Ա. 580-էն 545-ի միջեւ գլխաւորութեամբ Եզեկիէլ մարգարէին:

57) Որո՞նց օրով կատարուեցաւ Հին Կտակարանի գիրքերուն հինգերորդ ժողովածոն:

- Եզրաս քահանային եւ Նեհեմիա մարգարէին օրով, Ք.Ա. շուրջ 444-ին:

58) Աստուածաշունչը ինչո՞վ կը տարբերի աշխարհի միւս կրօններուն գիրքերէն:

- Շատ են տարբերութիւնները: Յիշեմ սոսկ մէկ քանին.-

Ա) Աստուածաշունչին մէջ ճշմարտութիւնը բացայայտողը եւ բացայայտուած ճշմարտութիւնը Աստուած է, այլ խօսքով՝ յայտնողն ու յայտնուողը՝ ի՛նք՝ Աստուած է:

Բ) Գրուած է 40 անձերու կողմէ, բայց ունի մէկ հեղինակ՝ Աստուած: Գրողներուն մէջ կային մարգարէներ, թագաւորներ, հովիւներ, քահանաներ, ձկնորսներ, պետական մարդիկ, բժիշկ, երկրագործ:

Գ) Գրուած է 1600 տարիներու ընթացքին, 3 տարբեր աշխարհամասերու մէջ:

Դ) Նոր Կտակարանը գրուած է շուրջ 50 տարիներու ընթացքին, 8 հեղինակներու կողմէ, եւ սակայն կը խօսի մէ՛կ անձի մասին՝ որ Յիսուսն է, մէ՛կ նպատակի մասին՝ որ Յիսուսով մարդկութեան փրկութիւնն է, մէ՛կ աւարտի մասին՝ որ պիտի յատկանշուի նո՛ր երկինքի ու նո՛ր երկրի գոյացումով: Աշխարհի մէջ չկայ գիրք մը որ գրուած ըլլայ բազմաթիւ անձերու կողմէ, երկար տարիներու վրայ, եւ խօսի մէ՛կ անձի, մէ՛կ նպատակի ու մէ՛կ աւարտի մասին:

Ե) Աստուածաշունչը պատմութեան գիրք չէ, բայց անոր մէջ արձանագրուած պատմութիւնները պատմական իրողութիւններ են: Բանաստեղծական գիրք չէ, բայց իր մէջ ունի բանաստեղծական գիրքեր, որոնք աշխարհի բոլոր բանաստեղծներուն ներշնչման առաջին աղբիւրը հանդիսացած են: Երգարան չէ, բայց աշխարհի ամենէն գեղեցիկ հոգեւոր երգերը կը գտնենք Սաղմոսաց գիրքին մէջ, ուրկէ աշխարհի բոլոր հոգեւոր երգիչները իրենց խայծը առած են: Գիտութեան գիրք չէ, սակայն գիտականօրէն անհերքելի է:

Չ) Պատմութեան ընթացքին ո՛չ մէկ գիրք Աստուածաշունչին նման հալածուեցաւ, բայց նաեւ ո՛չ մէկ գիրք Աստուածաշունչին նման տարածուեցաւ: Ո՛չ մէկ գիրք Աստուածաշունչին նման մերժուեցաւ մարդոց կողմէ, եւ սակայն ո՛չ մէկ գիրք Աստուածաշունչին նման ընդունուեցաւ մարդոց կողմէ: Ո՛չ մէկ գիրք Աստուածաշունչին նման հրկիզուեցաւ, եւ սակայն ան պահեց իր գոյութիւնը: Այսօր երկիրներ կան, որոնք կը սպաննեն Աստուածաշունչ կրողները, սակայն Աստուածաշունչը կը շարունակէ կեանք սփռել՝ կեանքի կարօտ անհատներուն:

60) Վերջին խօսք մը ունի՞ք
Աստուածաշունչին կապուած:

Ա) Միայն Աստուածաշունչն է
որ կը խօսի մարդուն հանդէպ
Աստուծոյ անսահման սիրոյն,
ողորմութեան եւ գթառատութեան
մասին: Մեր Աստուածաշունչին
մէջ՝ Աստուած հայր է, սէ՛ր ու սի-
րող է, բարի՛ ու բարերար է, խնա-
մատար ու հոգատար է:

Բ) Միայն մե՛ր Սուրբ Գիրքն է որ
խոստանայ մեղքերու քաւութիւն,
թողութիւն ու փրկութիւն: Միայն
մե՛ր Սուրբ Գիրքն է որ խոստանայ
յաւիտենական կեանք եւ ուրա-
խութիւն, յաւիտենական մխիթա-
րութիւն եւ խաղաղութիւն:

Գ) Բոլոր միւս կրօններուն պարագային՝ հեռացուցէ կրօնի հիմնադիրը՝ անոնց կրօնները կը մնան, իսկ մեր պարագային, հեռացուցէ Քրիստոսը քրիստոնէութենէն՝ քրիստոնէութիւն չի մնար, որովհետեւ, բոլոր կրօններուն մէջ, ճշմարտութիւնը խօսք մըն է, մինչդեռ քրիստոնէութեան մէջ ճշմարտութիւնը անձ մըն է՝ Քրիստոսը:

Դ) Աստուածաշունչը միակ գիրքն է որուն խօսքին համար կ'ըսուի, թէ քաղցր է (Ա.Պտ 2.3), ապառաժը կոտորող կրակէ մուրձի նման է (Եր 23.29), յախտենական կեանք տուող է (Յհ 6.68), մարդու շունչին ու հոգիին մէջ

թափանցող երկսայրի սուր է (Եբր 4.12), ճրագի նման է (Սղ 119.105), կենդանի ու ազդու է (Եբր 4.12), մարդուս մեջ հաւատք արթնցնող է (Հո 10.17), մարդուս սիրտը սրբող է (Ա.Տմ 4.5), մարդս բժշկող ու կործանումէ ազատող է (Սղ 107.20), օգտակար եւ ճշմարտութիւնը ուսուցանող ու սխալը հերքող է (Բ.Տմ 3.15-17):

Օգտագործած եմ Զարեհ Արք. Ազնաւորեանի գիրքերէն՝ *«Աստուածաշունչին Վերաբերեալ Ուսումնասիրութիւններ»* գործը, որուն խմբագիրն եմ:

(Տպագրութեան թ.՝ 2007):